Ռուս. Սոց.–Դեմ. կուսակցութեանը պատկանելու հետ։ Բայց մի անգամ որ «հաւատաց», այլևս ճարպիկ ձեռքով սկսեց անցկացնել նոր ծրագիրը։

Մայիս 22–ին Ժորդանիան վերադարձաւ Թիֆլիս։ «Գերման–վրացական» աշխատանքը ամբողջ թափով ընթանում էր «անդրկովկասեան–թրքական» աշխատանքին զուգընթաց*)։

Նոյն Աւալովը այդ օրերի դէպքերը հետեւեալ ձևով է արձանագրում իր յուշատետրի մէջ.

«Batum, 21 մայիս 1918. — Առաւօտեան Ն. Ժորդանիայի և Նիկոլաձէի հետ քննում ենք քարտէզի վրա մեզ անհրաժեշտ սահմանները, ծայրայեղ դէպքում պատրաստ ենք «տալու» Զաքաթալայի շրջանը։ Յօդուտ Ադրբէջանի սահմանային ուրիշ որև է սրբագրութիւն չենք անի։ Թիւրքերը դանակը կոկորդներիս դրած՝ պահանջներ են անում, բայց Ախալցխան, Խերթվիսը Վրաստանին պէտք է մնան։

Ցերեկը՝ խորհրդակցութիւն վրացիների ու թաթարների միջեւ սահմանների մասին։ Մի կողմից՝ Նիկոլաձէ, Ժորդանիա, Սուրգուլաձէ և ես. միւս կողմից՝ Խան–Խոյսկի, Խամամեդով, Սաֆիքիւրդսկի, Պեպինով, Ռասուլբէգով, Զաֆարով։ Հայերը հրաժարւել են Դանձակի նահանգի մասերից (Ղարաբաղ), իսկ մահմեդականները... համաձայն են կազմել Անդրկովկասում առանձին հայկական կանտոն (օրինակ, զեմստուոյական «Ալեքսանդրապոլի նահանգ»–ի ձևով)։ Մեզանից էլ ուզում են գրաւել Սըղնախ, Թիֆլիս և Բորչալու գաւառների մասերը, բայց համաձայնութիւնը հնարաւոր է. նրանք կը զիջեն։ Ախալցխայի խնդրի առթիւ Պեպինովը առաջ է քաշում ինքնորոշման պահանջը (հասկանալով կցումը Թիւրքիային)։

Ընդհանուր առմամբ, մեր բարեկամ մահմեդականները հաւատացնում են, որ ամէն կերպ պաշտպանելու են «երբեակ» Անդրկովկասը. բայց, ասում են, ի՞նչ անել, եթէ Թիւրքերը չհրաժարւեն իրենց պահանջներից, և ծրագրուող «կանտոններից» մէկը բացակայի։ Նրանց փափաքն է, այդ դէպքում, պահպանել Անդրկովկասը դէթ որպէս «երկեակ միութիւն»։

«Մայիս 22. — Աչքի առաջ ունենալով «Անդրկովկասին սպառնացող փլուզումը՝ վճռական խորհրդակցութիւն եղաւ Վրաստանի անկախութիւնը յայտարարելու անհրաժեշտութեան մասին։ Ծրագիրն այն է, որի մասին վաղուց ի վեր, իբրև «խորհրդական», պնդում եմ այստեղ և որին Զիսենկելին և ուրիշները համաձայն են։ Վրաստանի անկախութիւնն ու հողային ամբողջութիւնը երաշխաւորւում է Գերմանիայի կողմից։ Արևելեան Անդրկովկասը սառնում է գործելու ազատութիւն և կազմակերպւում է Թիւրքերի օգնութեամբ։ Հայերն էլ պարտաւորւած պիտի լինեն յայտարարել իրենց անկախութիւնը...

Գրեցի Վրաստանի անկախութեան յայտարարութեան նախագիծը — ժամանակն է ճշտորոշել, գործել։ Զիսենկելին, Նիկոլաձէն, Ժորդանիան, Սուրգուլաձէն հաւանութիւն տուին։ Ժորդանիան այդ նախագիծն իր հետ տարաւ Թիֆլիս։ Մնաս բարովի ժամանակ մենք առանձնապէս սեղմում էինք նրա ձեռքերը։ Նա ստիպւած պիտի լինի բեմադրել մի շատ լուրջ թատերախաղ։ Մտածեցէ՛ք միայն զանազան կազմակերպութիւնների, խորհուրդների և է՛լ աւելի թանձր նախապաշարումների մեծութեան մասին։ Բայց նա, երեւի, արդէն նախապատրաստել է վերջին գործողութիւնը. մնում է քաշել թելը»։

---

*) З. Авалов. «Независимость Грузіи в международной политикѣ» 1918—21 г. Парижъ, 1924 г., стр. 5.